

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



Երևանի պետական համալսարանի ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր

Վ. Հովհաննիսյան

« 20 » Հունիս 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» ամբիոնի նիստում: Նիստին ներկա էին ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար տ.գ.թ. Գ.Է.Սահակյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտ Թ.Ա.Հովակիմյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Մ.Մնացականյանը, տ.գ.թ., դոցենտ Է.Ն.Մաթևոսյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ա.Սիրոյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Վ.Քառյանը, տ.գ.թ., Կ.Է.Սահակյանը, տ.գ.թ., Բ.Ա.Ասատրյանը, տ.գ.թ., Հ.Հ.Դովլաթյանը, տ.գ.թ., Լ.Հ.Կարապետյանը, նիստի քարտուղար Լ.Ասրյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինտեխի դերը և նշանակությունը

Վերջին տարիներին ֆինանսական տեխնոլոգիաների (ֆինտեխի) արագ զարգացման շնորհիվ ֆինանսական ոլորտում տեղի են ունեցել նշանակալի փոփոխություններ: Ֆինտեխը ներառում է այնպիսի նորարարական լուծումներ, որոնք ուղղված են ֆինանսական ծառայությունների մատուցմանը և բանկային գործընթացների արդիականացմանը: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս բարելավել ծառայությունների որակը, նվազեցնել ծախսերը և ապահովել բարձր մակարդակի արդյունավետություն:

Արդիականությունը ՀՀ բանկային համակարգում

Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգը վերջին տարիներին բախվում է մի շարք մարտահրավերների, որոնք պայմանավորված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով: Ֆինտեխի ներդրումը հանդիսանում է կարևորագույն գործիք, որը թույլ կտա բարելավել բանկային ծառայությունները, մեծացնել հաճախորդների հարմարավետությունը և բարձրացնել բանկային համակարգի մրցունակությունը:

Տարածաշրջանային և գլոբալ համատեքստ

Տարածաշրջանային և գլոբալ մակարդակում ֆինտեխը արդեն իսկ ցուցաբերում է իր ազդեցությունը՝ ներգրավելով նոր հաճախորդներ և ապահովելով մատչելի ու արագ ֆինանսական ծառայություններ: Այս համատեքստում կարևոր է, որ Հայաստանի բանկային համակարգը հետևի միջազգային միտումներին և ներդնի ֆինտեխի լուծումներ՝ տարածաշրջանային մրցակցության պայմաններում դիրքերը պահպանելու և բարելավելու նպատակով:

Թեմայի գիտական կարևորությունը

Ատենախոսության թեման՝ «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում», ունի ակնհայտ գիտական արժեք, քանի որ այն նպատակ ունի ուսումնասիրելու և բացահայտելու ֆինտեխի արդյունավետության հիմնական գործոնները և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ բանկային ոլորտում: Այս հետազոտությունը հնարավորություն կտա գնահատելու ֆինտեխի ներդրման ազդեցությունը և մշակելու ռազմավարական առաջարկներ, որոնք կնպաստեն ՀՀ բանկային համակարգի արդիականացմանը և զարգացմանը:

Այսպիսով արդյունքներ և գործնական նշանակությունը

Ատենախոսության արդյունքները կարող են ունենալ լայն գործնական կիրառություն, մասնավորապես՝

- Բանկային կառույցների կողմից ֆինտեխի արդյունավետ կիրառման ռազմավարությունների մշակում:
- Բանկային ծառայությունների մատուցման որակի բարելավում և հաճախորդների վստահության բարձրացում:
- Բանկային համակարգի ծախսերի նվազեցում և գործունեության արդյունավետության բարձրացում:

Այսպիսով, ատենախոսության թեմայի արդիականությունը հիմնավորվում է ինչպես ՀՀ բանկային համակարգի արդի պահանջներին համապատասխանեցմամբ, այնպես էլ ֆինտեխի միջազգային փորձի ուսումնասիրությամբ և դրա ներդրման հնարավորությունների բացահայտմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեղինակի կողմից ատենախոսության մեջ որպես հետազոտության նպատակ և խնդիրներ ներկայացվել են.

«Հետազոտության հիմնական նպատակն է համակողմանիորեն հետազոտել ֆինտեխի դերը բանկային համակարգում, գնահատել ՀՀ-ում դրա զարգացման նախադրյալներն ու արդի վիճակը, նաև, հիմնվելով ֆինտեխի զարգացման միջազգային լավագույն փորձի համալիր վերլուծության արդյունքների վրա, վերհանել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացման խնդիրներն ու մշակել դրանց լուծմանն ուղղված առանձին ընդհանրական առաջարկություններ:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Հետազոտել ֆինտեխի բովանդակությունը, դերն ու նշանակությունը բանկային համակարգում և տնտեսությունում:
- Ուսումնասիրել ֆինտեխի զարգացման ընթացքը, միտումներն ու մարտահրավերները առանձին երկրներում:
- Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման արդի վիճակը:
- Հետազոտել ՀՀ-ում ֆինտեխի ներդրման և զարգացման նախադրյալները,
- Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման, խորացման և ընդլայնման առանցքային խնդիրները:
- Ներկայացնել ՀՀ-ում ֆինտեխի զարգացման առանձին խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանը միտված առաջարկություններ:»

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքում նշվում է, որ ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորոյթն են.

- Գործոնային վերլուծության մեթոդի կիրառմամբ մշակվել է ֆինտեխի զարգացման համաթիվ (ընդհանրական գնահատական), որը ներառում է ֆինտեխի զարգացման տարբեր ուղղությունների առանձին գնահատականներ: Դրա կիրառմամբ գնահատվել է ՀՀ-ում ֆինտեխի զարգացման մակարդակը:
- Ռեգրեսիոն վերլուծության գործիքակազմի կիրառմամբ հետազոտվել է տարբեր պարամետրերի (ծախսային, ինստիտուցիոնալ և այլն) ազդեցությունը ֆինտեխի զարգացման ներուժի և մակարդակի վրա, արդյունքում՝ վեր են հանվել մի շարք գործոններ, որոնք ֆինտեխի վրա ունեն նշանակալի ներգործություն, և որոնց թիրախավորումը կարող է ներառվել ոլորտի զարգացմանը միտված ծրագրային փաստաթղթերում:
- Ֆինտեխի զարգացման միջազգային լավագույն փորձի հետազոտության արդյունքները տեղայնացնելով ՀՀ-ում առկա իրողությունների պայմաններում՝ վեր են հանվել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացման առանձին

մարտահրավերներ, խոչընդոտներ և հիմնախնդիրներ, մասնավորապես՝ առանձին ուշադրություն է հատկացվել իրավական, կառավարչական, ֆինանսական, մշակութային հենք ունեցող խնդիրներին:

- Հետազոտվել են ՀՀ-ում կենսաչափական նույնականացման առկա խնդիրները, առաջարկվել է կենսաչափական նույնականացման մեթոդ, որը հիմնված է համակարգերի հինգ չափանիշների՝ ճշգրտության, արդյունավետության, կիրառելիության, անվտանգության և գաղտնիության վրա: Կենսաչափական նման համակարգերի ներդրումը կարևոր նախադրյալ է հանդիսանում ֆինտեխ առանձին բաղադրիչների, մասնավորապես՝ P2P վարկավորման, քրաուդֆանդինգային հարթակների զարգացման համար:
- Առաջարկվել է բաց բանկային գործունեության համակարգի ներդրման փորձնական մոտեցում և երեք փուլերից կազմված ալգորիթմային կառուցվածք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ իրականացված վերլուծությունների արդյունքները, ներկայացված գիտական և գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ բանկային համակարգի մասնակիցների, թվային ֆինանսական ծառայություններ մատուցող կամ շուկա մուտք գործել փորձող տեխնոլոգիական ընկերությունների կողմից իրենց ռազմավարական ծրագրերը կազմելիս, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Կառավարության կողմից՝ ՀՀ բանկային համակարգում մրցակցության բարձրացման ուղիներ մշակելու, տնտեսական աճի ապահովման, իրավական կարգավորումների մշակման գործընթացներում և երկրում ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման մակարդակը բարձրացնելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 172 էջից՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին գլուխը կենտրոնանում է ֆինտեխի՝ ֆինանսական տեխնոլոգիաների էության, սահմանումների և զարգացման վրա: Այն սկսում է

Ֆինտեխի հիմնական բաղադրիչների և բնութագրերի նկարագրությամբ՝ ընդգրկելով տեխնոլոգիական նորարարությունների պատմությունը: Ֆինտեխը դիտարկվում է որպես բանկային և ֆինանսական ծառայությունների մատուցման նորարարական մոտեցում, որը փոխակերպում է ավանդական բանկային մեթոդները՝ առաջարկելով առավել հարմարավետ, արդյունավետ և անվտանգ ծառայություններ:

Հաջորդիվ ներկայացվում են ֆինտեխի հիմնական առավելություններն ու հնարավորությունները, ինչպիսիք են բջջային բանկինգը, թվային վճարումները, վարկավորման նորագույն մեթոդները, բլոկչեյն տեխնոլոգիաներն ու բաց բանկինգը: Ներկայացվում են այս լուծումների շահավետ կողմերը ինչպես բանկերի, այնպես էլ հաճախորդների համար:

Այս գլխի վերջում քննարկվում են ֆինտեխի ներդրման հետ կապված հիմնական մարտահրավերները և խոչընդոտները: Ներկայացվում են այն խնդիրները, որոնց բախվում են բանկային համակարգի մասնակիցները, ինչպես նաև դրանց հաղթահարման հնարավորությունները:

Երկրորդ գլուխը նվիրված է ֆինտեխի զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությանը: Վերլուծվում են տարբեր երկրների հաջողված օրինակները, ներկայացվում են միջազգային լավագույն պրակտիկաները:

Այստեղ նաև ներկայացնում է ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման ներկա վիճակը ՀՀ բանկային համակարգում: Տրվում են օրինակներ ֆինտեխի կիրառման վերաբերյալ և դրանց ազդեցությունը բանկային ծառայությունների վրա: Վերջին բաժնում քննարկվում են ՀՀ բանկային համակարգի զարգացման արդի միտումները և առանձնահատկությունները, որոնց պետք է հաշվի առնել ֆինտեխի ներդրման գործընթացում:

Վերջին՝ երրորդ գլուխը սկսում է ՀՀ-ում ֆինտեխի զարգացման ներկա վիճակի և միտումների քննարկմամբ: Ներկայացվում են տեխնոլոգիական և տնտեսական գործոնները, որոնք նպաստում են ֆինտեխի զարգացմանը երկրում:

Հաջորդ բաժնում քննարկվում է ՀՀ բանկային համակարգում թվային ֆինանսական ծառայությունների զարգացման մակարդակը: Ներկայացվում են ընթացիկ զարգացումները և ապագա հեռանկարները՝ ընդգրկելով թվային ծառայությունների աճը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը և դրանց ազդեցությունը բանկային համակարգի արդյունավետության վրա:

Վերջին բաժնում քննարկվում են ՀՀ-ում ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնական խնդիրները և ուղղությունները: Ներկայացվում են ֆինտեխի ներդրման խոչընդոտները և դրանց հաղթահարման ռազմավարական առաջարկություններ՝ հիմնված միջազգային փորձի վրա:

Ատենախոսության եզրափակիչ մասը ներկայացնում է հիմնական եզրակացություններ և առաջարկությունները: Ներկայացվում են ֆինտեխի դերը ՀՀ բանկային համակարգում, դրա զարգացման հիմնական խոչընդոտները և

հաղթահարման ուղիները: Առաջարկություններ են տրվում ֆինտեխի զարգացման ուղղությամբ՝ ընդգրկելով բանկային ծառայությունների բարելավման, հաճախորդների ներգրավման և բանկային համակարգի արդյունավետության բարձրացման միջոցները:

Օգտագործված գրականության ցանկ բաժնում ներկայացված են բոլոր այն աղբյուրները, որոնք օգտագործվել են ատենախոսության մեջ՝ ներառյալ գիտական հոդվածներ, միջազգային վերլուծական զեկույցներ և վիճակագրական տվյալներ:

Հավելվածներում ընդգրկված են լրացուցիչ նյութեր և տվյալներ, որոնք օգտագործվել են ատենախոսության վերլուծությունների և եզրակացությունների համար, ներառյալ գծապատկերներ, աղյուսակներ և հարցումների արդյունքներ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 1) Արդիականության հիմնավորման մեջ նշելով, որ «Հետազոտության թեմայում բարձրացված խնդիրները միտված են փոխելու ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացումը», հեղինակը, մեր կարծիքով, շատ մեծ հավակնոտ խնդիր է դնում, որը հնարավոր չէր լուծել:
- 2) Ցանկալի կլիներ դիտարկել նաև ֆինտեխի ազդեցությունը ՀՀ տարածքում գործող բանկերի մասնաճյուղային ցանցի հետագայի վրա, բանկային մասնագետների մի ստվար հատվածի հետագա զբաղվածության վրա:
- 3) Աշխատանքի զգալի մասեր ունեն զուտ նկարագրական բնույթ:
- 4) Ամբողջ աշխատանքում ֆինտեխի վերաբերյալ գրեթե բոլոր մեկնաբանությունները խնդրահարույց են, քանի որ հեղինակը ֆինտեխի մեկնաբանություններում ուղղակի չի տարբերակում դրա հետ առնչվող և կամ դրա առանցքը կազմող երևույթները, հասկացությունները, կատեգորիաները, համակարգերը, և մյուս կողմից տեխնոլոգիական առանցքը, գործիքակազմը, պրոդուկտները և այլն: Դրանք մատուցվում են միաժամանակ մեկ շարքում, ըստ այդմ, ֆինտեխը կամ համանման և այլ կատեգորիաները խառնվում են դրա տեխնոլոգիական առանցքը կազմող բաղադրիչների և կամ համակարգերի հետ, որոնք կիրառվում է ֆինտեխում և կամ դրա տեխնոլոգիական առանցքի գործիքակազմում: Այս դեպքում, ընթերցողի համար ներկայացվածը տարբերակելու համար մնում է երևակայական մի առանցք՝ թվարկումների մեջ տեսնել նոր կամ թարմ տրենդային իմաստով բառ (որը ամենևին չի նշանակում ինովացիոն երևույթ): Մասնավորապես, հաճախ մեկ շարքում են նշվում՝ բջջային և կամ օնլայն բանկինգ, բաց բանկային գործունեություն (Open banking), էլեկտրոնային վճարումներ, P2P փոխանցումներ, P2P վարկավորում, կրիպտոարժույթներ, ավտոմատացված ռոբոտ-խորհրդատուներ, չատբոտեր, կենսաչափական նույնականացման տեխնոլոգիաներ, անձնական ֆինանսների կառավարման ծառայություն, ներդրումային ծառայություն, «KYC», ՓԼ/ԱՖ, «Գնիր հիմա, վճարիր

հետո» և այլն: Տեքստում նմանատիպ որևէ առանցք չունեցող թվարկումները համատարած են, ըստ այդմ, անհասկանալի է որն է ֆինտեխի հետ կապված համակարգը, մոտեցումը, տեխնոլոգիան գործիքակազմը, տեխնոլոգիական բաղադրիչը և ծառայությունը, ֆինանսական պրոդուկտը և այլն:

Ամենատիպիկ օրինակներից մեկը, էջ 22: մեջբերում՝ «Աճի նման ցուցանիշը մեր կողմից քննարկված ֆինանսական տեխնոլոգիաների մեջ զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը՝ բլոկչեյն տեխնոլոգիաների և ինշուրտեխ շուկաների տարեկան աճի տեմպերից հետո:» Նկատենք մեկ հարթության մեջ են «բլոկչեյն տեխնոլոգիան և ինշուրտեխը», վերջինս ինչ որ առումով ածանցվում է բլոկչեյնից: Սսվածը վկայում այն մասին, որ հեղինակը ուղղակի չի պատկերացնում ուսումնասիրության հիմնախնդրի առանցքը: Նման օրինակները տեքստում կարելի է հանդիպել ամենուրեք:

- 5) Ատենախսությունը կառուցվածքային առումով չի համապատասխանում նման աշխատանքին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝

ա) 2-րդ գլխի վերնագիրը՝ «Ֆինտեխի միջազգային փորձի վերլուծություն» չի համապատասխանում բովանդակությանը: Այստեղ ներկայացված են նաև «ՀՀ բանկային համակարգի զարգացման արդի միտումները և առանձնահատկությունները»: Սույն գլխում պահանջված է նաև ՀՀ բանկային համակարգում և կոնկրետ բանկերում ֆինտեխի արդի վիճակի գնահատումը: Այն պարտադրված է աշխատանքի վերնագրով՝ «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում»: Ի դեպ, ներածությունում նման խնդիր հեղինակը ձևակերպել է՝ «Հետազոտել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի կիրառման արդի վիճակը»:

բ) Երրորդ գլխի երեք ենթաբաժինները ներկայացնում են ՀՀ-ում ֆինտեխի նկարագրություն և զարգացման պարզապես ցանկություններ և ոչ թե առաջարկություններ գիտական համարժեք հիմնավորումներով: Դիցուկ դրա մասին են վկայում ինչպես ենթաբաժինների վերնագրերը, այնպես էլ դրանց բուն բովանդակությունը: Այն համեմված է ինչ որ մի գործոնային վերլուծությամբ, որի մասին դիտողությունները ներկայացված են ստորև: Ըստ այդմ, այն հիմնականում նկարագրական նյութ է և ըստ աշխատանքի տրամաբանության ու պահանջների պետք է ներկայացվեին առաջին կամ երկրորդ գլխում:

գ) Աշխատանքի ծավալը գերազանցում է ատենախոսությունների համար սահմանվածը, որը ոչ միայն տեխնիկական պահանջ է: Նման աշխատանքը պետք է ունենա հստակ նպատակ, խնդիրներ, համարժեք գլուխներ ու դրանց ենթաբաժինների միջև համապատասխան տրամանաբանական կապ, ըստ այդմ, փոխկապված գլուխներով և ենթաբաժիններով պետք է կազմի ամբողջական հետազոտություն:

6) Ատենախոսության 3.1 և 3.2 ենթաբաժիններում ներկայացված հատվածներ, որը հեղինակը մատուցում է որպես ՀՀ-ում ֆինտեխի զարգացման գործոնային վերլուծություն, որը դժվար թե հավակնի կոչվելու գործոնային վերլուծություն: Մինչդեռ դրա հիմքով աշխատանքում արձանագրվել են խնդրահարույց երկու նորույթ, և արձանագրվել է, որ «գնահատվել է ՀՀ-ում ֆինտեխի զարգացման մակարդակը» և «վեր են հանվել մի շարք գործոններ, որոնք ֆինտեխի վրա ունեն նշանակալի ներգործություն»:

Պարզաբանենք. հեղինակը 127-րդ էջում նշում է: «Մեր կարծիքով, սակայն, Համաշխարհային ֆինտեխի ինդեքսի (The Global Fintech Index) գնահատականները ֆինտեխի զարգացման առումով ամբողջովին չեն արտահացում իրական պատկերը, քանի որ այն հաշվարկված է այնպիսի ցուցանիշների հիման վրա, ինչպիսիք են՝

- a. Տվյալ երկրի քաղաքների քանակը Top 100 ցանկում,
- b. Ֆինտեխի ուժեղ կողմերը՝ վճարումներ, տեխնոլոգիական գործընթացներ, բանկինգ և վարկավորում,
- c. Ֆինտեխ գործարքների ծավալը,
- d. Ոլորտային միջոցառումները,
- e. Աքսելերացիոն և ինկուբացիոն ծրագրերը, ասոցիացիաները, ֆինտեխի վերաբերյալ կուրսերը, դասերը և այլն,
- f. Ֆինտեխի վերաբերյալ օրենսդրությունը և այլն:»

Հեղինակի որպես հետազոտողի համարձակությունն ու խիզախությունը միանշանակ ողջունելի է, սակայն դա բավար չէ, քանի որ այնուհետև հեղինակի սեփական մեթոդաբանական հիմքով կառուցած առաջարկը, դժվար թե դիմանա գիտական քննադատության:

Ըստ էության, անգամ մեծ ցանկության դեպքում, այդ գնահատման մոտեցումը չի կարող արտացոլել ֆինտեխի առկա մակարդակը ՀՀ-ում կամ այլ երկրում: Նախևառաջ, ի սկզբանե, նման հավակնոտ խնդիր դնելով հիղինակը հակասում է ինքն իրեն, այսպես 106-րդ էջում ինքը մեթոդաբանական տեսակյունից պնդում է, որ «Ֆինտեխի թվայնացման աստիճանը որպես առանձին միավոր դժվար է գնահատել, քանի որ հստակ որևէ գործոնի ազդեցության չափը որոշելը գրեթե անհնար է, միևնույն ժամանակ՝ հստակ սահմանազատել բոլոր գործոնները, որոնք ազդում են թվայնացման աստիճանի վրա, նույնպես գրեթե անհնար է»:

Այնուհետև 111-րդ էջում հեղինակը պնդում է, որ «Ֆինտեխի վերաբերյալ ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ ՀՀ-ում գնահատականներ գտնելը իսկապես դժվար է, քանի որ այդ ուղղությամբ վերլուծություններ շատ քիչ են արվել: Իհարկե, որոշ հեղինակներ փորձել են տալ ֆինտեխի չափման վերաբերյալ գնահատականներ, սակայն այդ ամենը միանշանակ չէ, քանի որ փորձերը արվել են մասնավոր երկրների օրինակներով: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ այստեղ ինչպես

գիտական հետազոտողների ուսումնասիրությունների, աշխատությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից չեն գնահատվել և գոյություն չունեն ֆինտեխի չափման, զարգացման, ինչպես նաև դրա վրա ազդող նախադրյալների վերաբերյալ գնահատականներ:»

Մեջբերումը ներկայացված է ամբողջությամբ: Այն, որ ՀՀ-ում համապատասխան ուսումնասիրություններ դեռևս չկան կամ խիստ սակավ են, ըստ էության անվիճելի է, դրանք շատ սահմանափակ են: Իսկ ինչ վերաբերվում է միջազգային պրակտիկային և մասնագիտական հրապարակումներին, ապա խնդիրը նրանում է, որ հեղինակը բավարար չի ուսումնասիրել այն, իսկ առանձին դեպքերում հանդիպելով այդպիսիք, չի կարողացել ընկալել դրանց էությունը բուն ֆինտեխի մեկնաբանությունների առումով, մասնավորապես, դա վերաբերվում է հետևյալ հեղինակների ուսումնասիրությանը՝ «Douglas A., János B., Ross B., The Evolution of FinTech: A New Post-Crisis Paradigm» (որը ի դեպ հեղինակը ցիտում է): Այդ կարգի արժեքավոր աշխատությունները անգամ համացանցի հասանելի ռեսուրսներում իրականում շատ են: Ընդհանրապես, հեղինակը աշխատանքի բազմաթիվ հատվածներում շատ հաճախ հակասում է ինքն իրեն:

Հեղինակը հանգելով այն եզրակացության, որ ֆինտեխը որպես կատեգորիա և դրա վրա ազդող գործոնները պարզ չեն և «հստակ որևէ գործոնի ազդեցության չափը որոշելը գրեթե անհնար է»: Նման մեթադոկտրինական կարգի եզրահանգումից հետո հեղինակը, այնուհետև տարբեր ոլորտների հետ առնչվող միջազգային ինդեքսների (Նորարարության համաշխարհային ինդեքսի (Global Innovation Index և այլ ինդեքսներ) հիմքով առաջարկում է 59-ը երկրների բազմաթիվ ցուցանիշների շարքով գնահատել է ՀՀ-ում ֆինտեխի զարգացման մակարդակը, և գնահատում է, որն առնվազն տարակուսելի է:

Անգամ եթե հեղինակի կիրառած վերլուծությունը, մեթոդոլոգիական առումով խոցելի չհամարվի, և ընդունենք, որ այն ինչ որ նշանակություն կարող է ունենալ, ապա միգուցե կարող է վկայակոչել երկրի SCS, հանրային կառավարման և կամ ընդհանուր տնտեսության թվայնացման նախադրյալները արտացոլող գործոնների շարքի պատկեր: Դրանք թերևս անուղղակի կարող են նպաստել ֆինտեխի զարգացմանը, բայց անվանել այն ֆինտեխի զարգացման աստիճանի գնահատում և այդ հիմքով կառուցել ֆինտեխի զարգացմանը միտված ծրագրային ուղղությունները, մեղմ ասած գիտական մոտեցման տեսանկյունից խնդրահարույց է:

Այսպես, հեղինակը 127 էջում նշում է, որ իր կողմից առանձնացված 26 տարատեսակ ցուցանիշների ուսումնասիրության և վերլուծության միջոցով ստացել է երկրների ֆինտեխի զարգացման գնահատականը հաշվարկելու նոր մոդել .. «Ըստ այդմ՝ իրականացվել են գործոնային վերլուծություններ, կառուցել ենք նոր մոդելներ, սահմանվել են ֆինտեխի ներդրման և զարգացման վրա ազդող

հիմնական գործոնները և տրվել յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը: Նոր մոդելով հաշվարկել ենք ՀՀ-ի և ընտրանքի երկրների ֆինտեխի զարգացման գնահատականը:» Նախևառաջ այնքան էլ հասկանալի չէ, ինչ նկատի ունի հեղինակը «նոր մոդել» ասելով, երևույթը գնահատումը ինքնին չի կարող մատուցվել ֆինտեխի զարգացման մոդել:

Անդրադառնալով հավելվածին, թիվ 11-րդ աղյուսակում՝ «Ֆինտեխի զարգացման վրա ազդող գործոնների վիճակագրական տվյալները 59 երկրների համար» հարկ է նշել, նշված ցուցիչները չեն կարող հավակնել ֆինտեխի զարգացման վրա ազդող գործոնների ամբողջական և կամ թիրախային պատկերի վերահանող գործոնների: Այսպես, առաջի խումբ ներկայացված ցուցիչների շարքում են. «Կատարել է կամ ստացել է թվային վճարում (% տարիք 15+)», «Կատարել է թվային վճարում (% տարիք 15+)», «Ստացել է թվային վճարում (% տարիք 15+)», «Կատարել է կոմունալ վճարումներ՝ օգտագործելով բջջային հեռախոս (% տարիք 15+)», «Օգտագործվել է բջջայինը պարտքեր վճարելու համար (% տարիք 15+)», «Իրականացրել է թվային վճարում վաճառակետում՝ օգտագործելով բջջային (% տարիք 15+)»: Նշված ցուցիչները, լավագույն դեպքում կարող են արտացոլել վճարային համակարգերի միջոցով էլեկտրոնային վճարումների պատկերը, ընդ որում ոչ բացառապես օնլայն վճարումների պատկերը: Հետևապես վճարումների համակարգից օգտվողների նման պատկերը, ուղղակի չի կարող արտահայտել երկրների ֆինտեխի զարգացման վիճակը, քանի որ այն արժարժում է տվյալ խնդրի շատ նեղ հատվածը:

Ցուցիչների մյուս խումբը, դրանք են՝ «Վենչուրային կապիտալ ներդրումներ», «S&S օգտագործում», «Կառավաչության օնլայն ծառայություններ՝ «Ծրագրային ապահովման ծախսեր (% ՀՆԱ)», «ԱԳՄ յուրաքանչյուր 100,000 մարդու հաշվով», «Օգտագործել են դեբետային կամ կրեդիտային քարտ (% տարիք 15+)», «Ստացել են աշխատավարձ հաշվին (% ընդհանուր աշխատավարձ ստացողներ, տարիք 15+)»: կարող է անուղղակի պատկերել թվայնացման ինչ որ հատվածի մակարդակը, բայց ոչ ֆինտեխի պատկերը:

Նույնը վերաբերվում է ցուցիչների մյուս համախմբերին, դրանք են. «Օրենսդրական դաշտի որակ, ROA (% հարկելուց հետո)», «Բանկի ծախս եկամուտ հարաբերակցությունը (%),» , «Բանկի Z գնահատականը Բանկի ոչ տոկոսային եկամուտների հարաբերակցությունը ընդհանուր եկամտին (%),» «Ապրանքների և ծառայությունների արտահանում (% ՀՆԱ, Ապրանքների և ծառայությունների արտահանում (ընթացիկ US\$)-ներմավորված», և այդպես շարունակ, ասվածը վերաբերվում է մնացած ցուցիչների համախմբերին, կրկին նշենք դրանք անուղղակի կարող են վկայել ֆինտեխի զարգացման նախադրայինների մասին:

Ընդհանրապես, տնտեսագիտության մեջ որևէ երևույթի համար գործոնների միջոցով ինտեգրալ ամփոփ ցուցանիշի կամ ցուցանիշների կառուցումը բարդ

խնդիրներից է, հետևապես հեղինակը նման խնդիր ձեռնարկելուց առաջ պիտի ուսումնասիրեր դրա մեթոդաբանական հիմքերը, և խնդրի լուծումն ընթացքում նաև ըստ անհրաժեշտության հղում աներ դրանց վրա: Այլապես, կարելի վերցնել ցուցանիշների որևէ լայն կամ ոչ այնքան լայն համախումբ և ըստ նախասիրության և կամ հետաքրքրության կառուցել որեէ երևույթի հարմար պատկեր: Այս դեպքում, խոսքը չի գնում «Տվյալագիտության» կամ «Մեծ թվերի» բազայի հիմքով կատարվող գնահատումներին, հեղինակը դրան չի էլ անդրադառնում:

Ըստ այդմ, հեղինակի 1-ին և 2-րդ նորոյթները, այն է՝ «գնահատվել է ՀՀ-ում ֆինտեխ զարգացման մակարդակը» և «վեր են հանվել մի շարք գործոններ, որոնք ֆինտեխի վրա ունեն նշանակալի ներգործություն, և որոնց թիրախավորումը կարող է ներառվել ոլորտի զարգացմանը միտված ծրագրային փաստաթղթերում» չեն կարող որակել որպես գիտական աշխատանքի հավակնող նորոյթներ (ինչ որ տեսակետ կարող են արտահայտել):

- 7) Հեղինակը ֆինտեխի զարգացման ուղղությունների մեջ (129-րդ էջ) ներառել է. «Նոր ներդրվող ֆինտեխ լուծումներ, ինչպիսիք են Բաց բանկային գործունեությունը (Open Banking), Արհեստական բանականությունը (Artificial Intelligence), Մեքենայական ուսուցումը (Machine Learning), Բլոկչեյն տեխնոլոգիաները (Blockchain), որտեղ կբացահայտենք նոր ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման հետ կապված ռիսկերը, խնդիրները:»

Նման իրավիճակում հեղինակը չի պատկերացնում այն, որ թվարկվածները ֆինտեխի զարգացման ուղղություններ չեն, դրանք մի դեպքում ֆինտեխում կիրառվող առանցքային մատրիցն է, ինչպիսին է բլոկչեյն տեխնոլոգիան (Blockchain), որին հեղինակը պետք է հավելեր «DLT –Distributed Ledger Tchnology» և ըստ այդ ներկայացներ դրանց նմանություններն ու տարբերությունները:

Ընդհանուր առմամբ, նման ուղղվածության աշխատանքում հեղինակը պիտի անդրադառնար արդի ժամանակաշրջանում կրիպտոարժույթների և կրիպտոակտիվների տեսության և գործնական իրագործող կնքահայր Սատոշի Նակամոտոյի հայեցակարգային դրույթներին (ընդամենը 8 էջ), որը նաև ֆինտեխի ներկա փուլի հիմնաքարն է կազմում: Ի դեպ, երկրորդ գլխում հիղինակի կողմից բլոկչեյնի արժարժումը մեղմ ասած բավականաչափ յուրովի է: Այստեղ չի ներկայացվում բլոկչեյն երևույթի առանցքը և դրա կիրառման հանարավորությունները տնտեսությունում և մասնավորապես ֆինտեխում, քանի որ այն բացել է նոր դարաշրջան:

Հեղինակի վերը մեջբերված ուղղությունները առանցքային կատեգորիաներ են, որոնց վրա է կառուցված ոչ միայն ֆինտեխը, այլ նախևառաջ ընդհանրական բիզնեսի արդի թվայնացումը, կրիպտոարժույթները, կրիպտոակտիվները, տոկենիզացիան և թվայնացման այլ փոխկապված ոլորտները:

Մյուս դեպքում, հեղինակի նշվածի մի հատվածը՝ «բաց բանկային գործունեություն (Open Banking)»-ը իրենից ներկայացնում է ամբողջական հայեցակարգային համակարգ, որում կիրառվում է նաև ֆինտեխի գործիքակազմը, սակայն այն հարկ չկա որակել ֆինտեխ: Ի դեպ, հեղինակը այն մատուցում է, որպես «բաց բանկային գործունեություն՝ ֆինանսատեխնոլոգիական մոտեցում» (էջ 146): Հարկ նշել, որ այն սկիզբ է առել Եվրոպայում, ընդ որում, օրենսդրական հիմքով կամ պարտադրանքով, որի տեխնոլոգիական լուծումները սկզբից առաջ են մղել տեխնոլոգիական ընկերությունները: Ի դեպ, դրա հիշատակումը սույն աշխատությունում տեղին է, սակայն այն առանձին հետազոտության թեմա է, քանի որ աշխատանքում դրա մեկնաբանությունները մեղմ ասած ուսանողական մակարդակի են և բավականաչափ խնդրահարույց: Խնդիրը նրանում է, որ ներկայացված գծապատկերում և նկարագրությունում հեղինակը լավ չի պատկերացնում «Open Banking»-ը, քանի որ, դրա իրագործման գծապատկերում նկարագրում է ինչ որ միջնորդի, որը հաճախորդի համար պիտի լուծի «Open Banking»-ի հասանելիությունը: Իրականում, այդ հասանելիությունը բավարարվում է օրենսդրական պահանջով (կամ պարտադրանքով) և լուծվում է API-րի միջոցով: Ըստ այդմ, վճարահաշվարկային սպասարկումները հաճախորդի համաձայնությամբ (կարևոր շեշտդարում է) հասանելի են դառնում այլ բանկերին, ինչպես նաև տեխնոլոգիական ընկերություններին: Ստիպված ենք հեղինակի համար հանգամանալից ներկայցնել «Open Banking»-ի միջազգային պրակտիկայում կիրառվող մոտեցման առանցքը:

Ի դեպ, հեղինակի ուշադրությունը հրավիրում ենք նաև այն բանի վրա, որ բանկերը, այդ թվում՝ ՀՀ-ում ինքնին ոգևորված չեն «Open Banking»-ի ներդրման գաղափարով: Ինչ վերաբերվում է այնուհետև հեղինակի կողմից «Open Banking»-ի առաջարկվող ներդրման փուլերին, ապա ուղղակի անհասկանալի է ինչու են օրենսդրական կարգավորումների մշակման փուլում և այնուհետև հաջորդ փուլում բանկերի կողքին հայտնվել ապահովագրական ընկերությունները: Լավ կլինի, որ հեղինակը այն հիմնավորի ու բացատրի, այլապես այն խիստ տարակուսելի է:

Վերը նշվածի առումով վերջին նորույթը, այն է՝ «Առաջարկվել է բաց բանկային գործունեության համակարգի ներդրման փորձնական մոտեցում և երեք փուլերից կազմված ալգորիթմային կառուցվածք», մեղմ ասած, հիմնավորված չի կարելի համարել:

- 8) Հարկ է նշել, որ արհեստական բանականությունը (Artificial Intelligence) և մեքենայական ուսուցումը (Machine Learning) անվանել ֆինտեխի ուղղություններ, կնշանակի «կարճ միացման» էֆեկտ առաջացնել, «AI - ԱԲ» և «ML - ՄՈւ» կարող են լինել և կան ֆինտեխի զարգացման առանցքները: Բայց այս դեպքում, պետք է նախանշի, կառուցի դրանց հնարավոր կիրարկման հայեցակարգը, մոտեցումները, չափորոշիչները, կառուցակարգերը կամ այլ լուծումների մատրիցը, այլապես նման

դատողությունները ինքնին լավ են, սակայն որևէ լուծում չեն պարունակում և աշխատանքին արժեքվոր բան չեն տալիս:

Անկեղծ ասած, աշխատանքը ընթերցելիս, 3-րդ գլխում ակնկալվում էր տեսնել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի տարբեր գործիքների ներդրման հետ կապված խնդիրներ, ռիսկերի բացահայտումներ, դրանց հնարավոր լուծման առաջարկներ, սակայն առերեսվում ենք ինչ որ թվարկումների հետ և դրանց առանձին տեսակների վերաբերյալ «հիացմունքների կամ բացականչությունների», իսկ երբեմն որոշ հինավորումների, որոքն շատ խոցելի են և կիրառական նշանակության չեն կարող հավակնել: Նշվածի օրինակներից է «Գնիր հիմա, վճարիր հետո» (Buy Now, Pay Later) գործիքը: Պարզվում է դրա հիմնական խոչընդոտը (էջ 131-րդ) այն է, որ ՀՀ բանկերը կիրառում են տարբեր տեխնոլոգիական ընկերությունների ծրագրեր և դրա ներդրումը խնդիր է հարուցում: Թերևս ասվածը կարելի համարել կազմակերպական խնդիր, սակայն ոչ ամենա մեծ խոչընդոտող խնդիրը, քանի որ. ա) այդ տեխնոլոգիան կարող են առաջարկել տարբեր տեխնոլոգիական ընկերություններ, բ) արդի թվային աշխարհում թվայնացման ամբողջական լուծումները իրացվում են համապատասխան «API»-ների օժանդակության միջոցով, որոնց միջոցով կարելի է հավաքել ցանկացած գործուն կառուցակարգ, և ընդ որում, այդ ընթացքում ապահովել բանկի թվային մատրիցի և մատուցվող տեխնոլոգիական ծառայության համատեղելիությունը: Նշվածը ֆինտեխի և բիզնեսի թվայնացման ծրագրերի և խոչընդոտների լուծման ու արագացման կարևոր կառուցակարգերից է և, ըստ այդմ, հեղինակի ուշադրությունը հրավիրում ենք այդ հանգամանքի վրա:

Վերը նշվածի առումով հիմնավոր չի հնչում նաև 3-րդ նորույթը՝ «Ֆինտեխի զարգացման միջազգային լավագույն փորձի հետազոտության արդյունքները տեղայնացնելով ՀՀ-ում առկա իրողությունների պայմաններում՝ վեր են հանվել ՀՀ բանկային համակարգում ֆինտեխի զարգացման առանձին մարտահրավերներ, խոչընդոտներ և հիմնախնդիրներ, մասնավորապես՝ առանձին ուշադրություն է հատկացվել իրավական, կառավարչական, ֆինանսական, մշակութային հենք ունեցող խնդիրներին»:

- 9) Հեղինակը աշխատանքում շատ տարողունակ անդրադարձ է կատարում կենսաչափական հիմքով նույնականացման խնդրին, այդ թվում ծավալային առումով, ներառյալ 1-ին և 2-րդ գլուխներում, որը կարող է հետաքրքիր թվալ, սակայն ի վերջո զբաղեցնում է անհարկի ծավալ և բացի այդ խնդրի առումով հեղինակը ամրագրել է նորույթ, որը գիտական առումով այդպիսին չի կարող որակվել:

Այսպես 136-րդ էջում անհասկանալի է հեղինակի հետևյալ միտքը. «շատ բանկեր նախընտրում են ռիսկերի կանխարգելման նպատակով հաճախորդներին բջջային բանկինգի հասանելիություն տրամադրել միայն բանկի մասնաճյուղ

մոտենալուց և նույնականացվելուց հետո»: Անկեղծ ասած, անհասկանալի է հաճախորդներին բջջային բանկինգի հասանելիությունը միայն բանկի մասնաճյուղ մտնելուց հետո, ընդհանրապես բջջային բանկինգը ուղղակի ենթադրում է մասնաճյուղերի անհրաժեշտության դադարում և վերացում:

Հեղինակը համոզված է, որ «լավագույն լուծումը կհանդիսանա կենսաչափական տվյալների միջոցով անձանց նույնականացումը և հեռահար թվային ծառայություններից օգտվելու հնարավորության ընձեռումը»: Այս առումով հարկ է նշել, որ նույնականացման խնդրի լուծումը կենսաչափական տվյալների միջոցով կամ այլ կերպ, ըստ էության, տեխնոլոգիական խնդիր է, և ընդ որում, ապագայում կարող են հայտնվել նույնականացման այլ առավել հաջող լուծումներ և ոչ կենսաչափական հիմքով: Ըստ այդմ, այս թեզը դարձնել աշխատանքի նորույթ առնվազն շատ թույլ հիմնավորում ունի: Ի վերջո, հեղինակը «հաճախորդ ներգրավելու ռազմավարություն ունեցող բանկի համար առաջարկվում է ներդնել երկակի մեթոդ՝ և՛ դեմքի, և՛ մատնահետքի միջոցով:» (139-րդ էջ): Կրկին պետք է նշել, որ մոտ կամ ոչ այնքան մոտ ապագայում կարող է հայտնաբերվել կենսաչափական հիմքով նույնականացման տեխնոլոգիա, որը կապված կլինի մարդու մարմնի այլ հատվածների հետ և ի՞նչ...: Ի դեպ, կենսաչափական հիմքով դեմքի առանձնահատկությունների հիման վրա մեխանիզմը, կարող է առաջացնել բարդ և զավեշտալի իրավիճակներ, կապված անձի դեմքի ժամանակավոր կամ հիմնական այնպիսի փոփոխությունների հետ, ըստ որի նույնականացնող համակարգը չի ճանաչի անձին: Հետևապես կառաջարկենք հեղինակին զերծ մնալ նման կարգի առաջարկությունները որակել գիտական նորույթ:

Հետևապես ատենախոսության թվով 4-րդ նորույթը, այն է՝ «Հետազոտվել են ՀՀ-ում կենսաչափական նույնականացման առկա խնդիրները, առաջարկվել է կենսաչափական նույնականացման մեթոդ, որը հիմնված է համակարգերի հինգ չափանիշների՝ ճշգրտության, արդյունավետության, կիրառելիության, անվտանգության և գաղտնիության վրա: Կենսաչափական նման համակարգերի ներդրումը կարևոր նախադրյալ է հանդիսանում ֆինտեխ առանձին բաղադրիչների, մասնավորապես՝ P2P վարկավորման, քրաուդֆանդինգային հարթակների զարգացման համար» իր բնույթով պոզիտիվ և առողջ տրամաբանության մեջ է, սակայն, դրանում հեղինակի նորույթի կանխավարկածը մեղմ ասած խնդրահարույց է: Հեղինակը 138-րդ էջում նշում է. «Ուսումնասիրելով բազմաթիվ հեղինակների աշխատանքներ բիոմետրիկ նույնականացման տեխնոլոգիաների ուղղությամբ, հանգել ենք այն մտքին, որ լավագույն կենսաչափական հաստատման տեխնոլոգիայի գնահատական տալու համար կարիք կա գնահատել հետևյալ մի քանի գործոնները՝ ճշգրտությունը, արդյունավետությունը, կիրառելիությունը, անվտանգությունը և գաղտնիությունը:»

Հետևապես՝ հեղինակը «ճշգրտության, արդյունավետության, կիրառելիության, անվտանգության և գաղտնիության» բացահայտումն է արել ուսումնասիրության արդյունքում և դա հարկ չկա վերագրել հեղինակին, քանի որ դրանում չկա այնպիսի բաղադրիչ, մոտեցում, չափորոշիչ, կառուցակարգ, որը ներմուծել է անձամբ հեղինակը: Ուղղակի հեղինակը համաձայն է այդ առողջ և հիմնավոր մոտեցման հետ:

- 10) Հեղինակը ամբողջ աշխատանքում տարբեր համատեքստերում անդրադառնում է ՀՀ բանկերի կողմից կիրառվող ֆինտեխի տեխնոլոգիական պրադուկտների կամ ծառայությունների կիրարկման օրինակներին՝ բջջային բանկինգ և այլ: Այս կամ այն բաներին և կիրառվող պրոդուկտներին ու ծառայություններին (օրինակ՝ «գնիր հիմա, վճարիր հետո») հաճախ տալիս է բացականչական գնահատումներ, որը կարող է ներկայացվել հրապարախոսական հոդվածում, բայց ոչ գիտականում: Մինչդեռ ՀՀ բանկերի ակտիվությունը ֆինտեխի ոլորտում որևէ կերպ չի ամփոփվում:

Հեղինակը բանկերի կողմից ֆինտեխի կիրարկման բնույթի դասակարգման առումով պետք է առաջարկի օբյեկտիվ չափորոշիչ կամ չափորոշիչներ և, ըստ այդ, ներկայացնի ՀՀ բանկերի գործունեության հակվածության աստիճանը ֆինտեխին:

- 11) Հեղինակը 3-րդ գլխում առաջարկությունների շարքում անդրադարձ կատարել նաև P2P վարկավորմանը, քրաուդֆանդինգին, բյուջետավորման հավելվածներին, արհեստական բանականություն (ԱԲ) և այլ հիմանխնդիրների, որոնք կրում են ընդհանրական ռեֆերատային բնույթ, չեն պարունակում դրանց ներդրման հետ կապված արժեքվոր հայեցակարգ, մոտեցում, չափորոշիչ, կառուցակարգեր և կամ այլ լուծումներ: Հետևապես, դրանցից աշխատանքի նպատակային լուծման խնդիրները և կամ որակը որևէ կերպ չի շահել: Ի դեպ, նշվածների մեկնաբանությունները անհարկի մեծացրել են աշխատանքի ծավալը, չներմուծելով արժեքվոր որևէ բան, հետևապես խորհուրդ է տրվում դրանք հիշատակել որպես ֆինտեխի հետ առնչվող կարևոր բաղադրիչներ և սահմանափակվել համառոտ մեկնաբանություններով, այնքանով որ այն կբխի աշխատանքի նպատակից և խնդիրներից:

- 12) Աշխատանքում օգտագործված աղբյուրների հղումների մեծ մասը սխալ է, քանի որ նախ պետք է նշվի հեղինակը (հեղինակները), այնուհետև հրապարակված աղբյուրի անվանումը, դրա՝ նույնականացման տվյալները՝ հրատարակողը, տարին, մեջբերման էջերը և այլ, իսկ էլեկտրոնային աղբյուրի դեպքում նաև հասանելի էլեկտրոնային աղբյուրի հասցեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն հետազոտություն է, սակայն, վերոնշյալ դիտողություններն ըստ էության նվազեցնում են աշխատանքի գիտահետազոտական բաղադրիչը:

Հետևաբար, Գրիգոր Վաչիկի Գրիգորյանի «Ֆինտեխի ներդրման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ բանկային համակարգում» թեմայով ատենախոսությունը Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման հարցը կարող է որոշվել մասնագիտական խորհրդի քննարկման արդյունքում:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի 18.06.2024 թ.-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 9):

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» ամբիոնի վարիչ, տ.գ.թ.՝




Գ.Է.Սահակյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» տ.գ.թ., ամբիոնի դոցենտ՝



Ա.Վ.Քառյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսահաշվային» տ.գ.թ., ամբիոնի դոցենտ՝



Ա.Ա.Նահապետյան

Գ. Սահակյանի, Ա.Քառյանի և Ա.Նահապետյանի ստորագրությունները հաստատում են՝

ԵՊՀ գիտական քարտուղար, ր.գ.թ., դոցենտ՝



Մ. Ա. Հովհաննիսյան